**ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 26/1**
***(ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ)***

*ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-26/34» ծածկագրով գնման ընթացակարգի*

ք. Երևան «19» փետրվարի 2026թ.

«Քրոու Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Գործընկեր-1»), ի դեմս տնօրեն Ալբերտ Սերգեյի Ասատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության համաձայն, «Պրոֆ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Գործընկեր-2»), ի դեմս տնօրեն Զարզանդ Ռաֆիկի Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության համաձայն, երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասը, «ԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-26/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2.6-րդ կետը և 4.3-րդ կետի 5-րդ ենթակետը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան.**

**1.1** Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու համար, իրականացնելով հետևյալ գործունեությունը, այն է՝ կատարել «ԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-26/34» ծածկագրով գնման ընթացակարգով սահմանված ներքին աուդիտի ծառայությունները պատշաճ ձևով և որակով՝ համաձայն պատվիրատուի պահանջների:

**1.2** Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

- Գործընկեր-1-ը՝ և Գործընկեր 2-ը, սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված ծառայությունների մատուցման համար, ներդնում են հավասար ֆինանսական միջոցներ՝ այդ թվում նաև մասնակցության համար նախատեսված հայտի ապահովումը (եթե դրա անհրաժեշտությունը կլինի), վճարվելիք կանխիկ գումարի կամ բանկային երաշխիքի հավասար բաշխվածությամբ, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը վճարվելիք կանխիկ գումարի կամ բանկային երաշխիքի հավասար բաշխվածությամբ չափով, մասնագիտական փորձառությունը, աշխատանքային ռեսուրսները, ինչպես նաև կրում է վերջնական պատասխանատվություն մատուցված ծառայության համար:
- Գործընկեր-1-ը և Գործընկեր-2-ը՝ սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված ծառայությունների մատուցման համար, որպես ավանդ ներդնում են իր մասնագիտական փորձառությունները, աշխատանքային ռեսուրսները, ադմինիստրատիվ ռեսուրսները, ինչպես նաև կրում են վերջնական պատասխանատվություն մատուցված ծառայության համար,

**1.3** Կողմերի համաձայնությամբ ծառայությունների մատուցման համամասնությունը բաշխվում է հետևյալ կերպ. «Քրոու Արմենիա» ՍՊ ընկերություն՝ 50%, «Պրոֆ Աուդիտ» ՍՊ ընկերություն՝ 50%: Ուստի ծառայությունների դիմաց հատուցումը նույնպես պետք է բաշխվի վերոնշյալ համամասնությամբ:

**1.4** Վճարման եղանակը և ժամկետները կսահմանվեն կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի միջոցով՝ «ԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-26/34» ծածկագրով մրցույթի շրջանակներում պայմանագիր կնքելու առաջարկ ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**2. Ընդհանուր գործերը վարելը և գույքը.**

**2.1** Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է Գործընկեր-1-ը, հետևաբար «ԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-26/34» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվում է վերջինիս կողմից:

**2.2** Երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր-1-ի և Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր-1-ի և Գործընկեր-2-ի լիազորությունները հավաստվում են սույն պայմանագրի 2.3-րդ կետով:

**2.3** Կողմերը համաձայն են, որ սույն մրցույթի շրջանակներում, ցանկացած փաստաթղթերի կազմման և ստորագրման, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի ներկայացման պարտականությունները դրվեն Գործընկեր-1-ի վրա:

**2.4** Կողմերի համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը վարում է Գործընկեր-1-ը:

**2.5** Կողմերն ընդհանուր գործերին վերաբերող որոշումների ընդունումը բաշխում են հավասարաչափ:

**2.6** Կողմերից յուրաքանչյուրը, անկախ այն բանից, թե լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը, թե՝ ոչ, իրավունք ունի ծանոթանալու համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալու այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

**2.7** Երրորդ անձանց հետ հարաբերություններում կողմերի անունից հանդես գալու իրավունք ունեցող և կողմերի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող գույքի հաշվապահական հաշվառումն իրականացնող կողմերը կարող են փոփոխվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

**2.8** Կողմերի համատեղ գործունեության հետ կապված ծախսերը և վնասները ծածկվում են համամասնությամբ:

**3. Շահույթի և բաժնեմասերի ստացման կարգը.**

**3.1** Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է Կողմերի միջև հետևյալ համամասնությամբ՝ Գործընկեր-1-ը 50%, Գործընկեր-2-ը՝ 50%:

**3.2** Կողմերն իրավունք ունեն ազատ տնօրինելու ընդհանուր բաժնային սեփականությունում իրենց պատկանող բաժնեմասը՝ մյուս կողմի այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի պահպանման պայմանագրով:

**3.3** Ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է Կողմերի միջև բաժանվել նրանց համաձայնությամբ: Իսկ համաձայնության բացակայության դեպքում առանձնացման կիրառման կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

**4. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը.**

**4.1.** Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 /մեկ/ տարի ժամկետով:

**4.2.** Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս կողմին՝ դուրս գալու օրվանից ոչ ուշ, քան 3 երեք ամիս առաջ:

**4.3.** Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

- ➢ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու,

- սնանկ ճանաչելու,
- սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքում:

**4.4.** Սույն պայմանագրի փոփոխումը կամ լուծումը հնարավոր է Կողմերի համաձայնությամբ, որևէ Կողմի պահանջով, դրա հետևանքով մյուս կողմին հասցված վնասը հատուցելու պայմանով:

**5. Այլ պայմաններ.**

**5.1** Սույն պայմանագիրը կնքված է 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

**5.2** Կողմերի հասցեները և վավերապայմանները`

**Գործընկեր-1**
Անվանում` «Քրոու Արմենիա» ՍՊԸ
ՀՎՀՀ` 02618043
Բանկ` «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ` 2052022188681001
Հասցե` ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ
Տնօրեն` Ա. Ասատրյան

_______________
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by ASATRYAN ALBERT 1707860173
Date: 2026.02.19 16:48:16 AMT

**Գործընկեր-2**
«Պրոֆ Աուդիտ» ՍՊԸ
ՀՎՀՀ` 08410295
Բանկ` «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ` 19300785800700
Հասցե` ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, 2-րդ փողոց, 1-ին տուն
Տնօրեն` Զ. Խաչատրյան

_______________
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by KHACHATRYAN ZARZAND 3609800267
Date: 2026.02.19 12:40:11 AMT